

Ռումինիայի բանակցությունները Եվրոպայի հետ ինտեգրման համար

Անցումը ժողովրդավարությանը, որը սկսվեց 1989թ. հեղափոխության հետ միասին, որպես Ռումինիայի նկատակ սահմանեց ժամանակակից ժողովրդավարական պետության ստեղծումը, որը հիմնված պետք է լիներ օրենքի գերակայության, շուկայական տնտեսության և մասնավոր սեփականության վրա և որը պետք է կարևորեր սոցիալական պաշտպանության և բնության պահպանման վրա: Եվ քանի որ դրանք այն արժեքներն են, որ ընկած են Եվրամիության հիմքում, Ռումինիայի ինտեգրումը Եվրոպական ընտանիքին ենթադրում է անցման հաջող գործընթաց:

Ռումինիան որպես ԵՄ-ի ապագա անդամ, ամենից ավելի շահագրգռված է իր ներդրումն ունենալ հզոր Եվրոպայի կայացման մեջ, որն ընկալվում է որպես ժողովրդավարության, ազատության, անվտանգության, կայունության և բարգավաճման ընդհանուր տարածք: Ուստի Ռումինիան պատասխանատու քայլ է կատարել Եվրոպայի ընդլայնման բոլոր փուլերում, բարեփոխումների և ներքին փոփոխությունների տեմպերը արագացնելու միջոցով համապատասխանել տնտեսական կատարողականի չափանիշերին և Եվրոպական սոցիալական չափորոշիչներին:

ԵՄ-ին անդամակցելու համար նախապատրաստական միջոցառումների արագացման և ինտեսիֆիկացման անհրաժեշտությունը իր ընթացումն է գտել նոր կառավարության կողմից, այսպես, Եվրոպական ինտեգրման նախարարություն է ստեղծվել, որը պետք է ծառայի որպես մի հաստատություն, որը համակարգելու է ԵՄ-ին Ռումինիայի ինտեգրման աշխատանքները:

Այս կառույցը ստեղծելով՝ Ռումինիայի կառավարությունը հզորացրել է այն ինստիտուցիոնալ հիմքը, որն անհրաժեշտ է արդյունավետ կառավարման, ինտեգրման գործընթացի արագացման և զարգացման համար: Այս քայլը ունեցավ իր արդյունքը՝ միանալու ողջ գործընթացի հանդեպ միասնական, շարունակական և պրամատիկ/գործնական մոտեցման ապահովում, որը մշակվել է Կառավարման ծրագրով նախատեսված միջաջառումների հիման վրա: Ըստ իր կառուցվածքի, նախարարությունը աշխատանքներ է տանում ԵՄ-ին միանալու բոլոր ասպեկտների գծով, ուստի նորոյթ է հավակնորդ պետությունների համար:

Նշված նախարարությունը հետևյալ իրավասություններն ունի. այն համակարգում է նախարարությունների և կենտրոնական կառավարման այլ մարմինների հետ ԵՄ-ի հաստատությունների և անդամ-պետությունների հարաբերությունները, մոնիտորինգ է իրականացնում այն աշխատանքների գծով, թե ինչպես են իրագործվում Եվրոպական համաձայնագրի դրույթները, կառավարում և ղեկավարում է ԵՄ-ին Ռումինիայի միանալու համար ստեղծված Ազգային պատվիրակության գործունեությունը: Այն նաև սահմանում և համակարգում է միանալու գործընթացի նախապատրաստական աշխատանքները՝ ռազմավարական ծրագրային փաստաթղթեր մշակելու միջոցով, պարտադիր կերպով հաստատում է այն օրենսդրության նախագիծը, որի նպատակն է Ռումինիայի օրենսդրությունը համապատասխանեցնել ԵՄ-ի օրենսդրությանը և այլն:

Ինստիտուցիոնալ համակարգում բարեփոխումների շրջանակներում, որոնք ուղղված են Ռումինիայի՝ ԵՄ-ին ինտեգրմանը, կարևորվում է տեխնիկական կառույցների ստեղծումը, որոնց նպատակն է նախապատրաստել և ղեկավարել բանակցությունների գործընթացը, հաշվի առնելով այն նոր փուլը, որը սահմանվել է Յելսինկիում ընդունված Եվրախորհրդի որոշմամբ: Այնուհետև, Ռումինիայի կառավարությունը մեծ շահագրգռվածություն է ցուցաբերել Ռումինիայի շուկայական տնտեսությունը զարգացնելու նպատակով նախատեսված բանակցությունները սկսելու և ավարտին հասցնելու համար: Բանակցությունների հաջող ավարտը ինքնանպատակ չէ, այն նպաստելու է ներքին նախապատրաստական աշխատանքների իրականացմանը, որոնք անհրաժեշտ են նա համար, որ 2007թ. հունվարի 1-ից Ռումինիան դառնա ԵՄ-ի լիիրավ անդամ:

ԵՄ-ին անդամակցելու համար ըստ կառավարության որոշման ստեղծվել է ազգային պատվիրակություն, որի նպատակն է բանակցություններ վարել ԵՄ-ին

միանալու համար, այդ պատվիրակությունը ղեկավարում է նախարար-պատվիրակը և ԵՄ-ի հետ գլխավոր բանակցողը:

Ազգային պատվիրակությունը բաղկացած է ճյուղային պատվիրակություններից (աշխատանքային խմբերից), ճյուղային պատվիրակությունների համանախագահներից և ազգային պատվիրակության ղեկավարի օգնականներից: Գյուղային պատվիրակությունները բաղկացած են նախարարությունների և կենտրոնական պետական կառավարման հետ կապված այլ հաստատությունների մասնագետներից, որոնք պատասխանատու են համապատասխան ոլորտում ԵՄ-ի օրենսդրության ընդունման և իրականացման համար: Նախարարությունների դեպքում ճյուղային պատվիրակության անդամների աշխատանքը համակարգվում է ԵՄ-ի հետ ինտեգրման պետական քարտուղարի, իսկ կենտրոնական պետական կառավարման այլ հաստատությունների դեպքում՝ պատասխանատու պաշտոնյայի կողմից:

Նախարարությունների միջճյուղային պատվիրակությունները, որոնք ստեղծված են բանակցությունների յուրաքանչյուր փուլի համար, բանակցությունների և խորհրդակցությունների ներքին գործընթացի հիմնական կառույցն են, դրանց արդյունքում ստեղծվում են հայեցակետային փաստաթղթերի նախագծերը: Յուրաքանչյուր ճյուղային պատվիրակություն պետք է իր կազմում ունենա Եվրոպական ինտեգրման նախարարության մեկ ներկայացուցիչ, ով պատասխանատու է ԵՄ-ի հետ Ռումինիայի ընդհանուր բանակցությունների համար և Հանրային ֆինանսների նախարարությունից մեկ ներկայացուցիչ:

Ազգային պատվիրակությունը բանակցությունները նախապատրաստել է համաձայն այն մեթոդաբանության, որը մշակվել է ԵՄ-ը Ռումինիայի անդամկցելու համար հայեցակետային փաստաթղթով, և որը հաստատվել է Ռումինիայի կառավարության կողմից: Ազգային պատվիրակությունը նաև սահմանել է այն շրջանակները, որոնք անհրաժեշտ են բանակցությունների յուրաքանչյուր փուլը սկսելու նպատակով Ռումինիայի կարգավիճակը գնահատելու, ինչպես նաև ԵՄ-ի հետ բանակցությունների ընթացքում Ռումինիայի կողմից ստանձնված պարտավորությունների կատարման մոնիտորինգի համար:

ԵՄ-ին անդամակցելու նպատակով բանակցությունների համար ազգային պատվիրակության գործունեության սկիզբը հայեցակետային փաստաթղթերի նախապատրաստման նոր մոտեցում է նշանավորել, հիմնվելով հետևյալի վրա.

- բանակցությունների յուրաքանչյուր փուլում Եվրահանձնաժողովի հետ մշտական տեխնիկական քննարկումներ/խորհրդակցություններ,
- Եվրաինտեգրման հանձնախմբի և պառլամենտի մասնագիտացված հանձնաժողովների հետ ընդլայնված խորհրդակցություններ/քննարկումներ,
- երկրի ներսում սոցիալական և տնտեսական խորհրդի, սոցիալական գործընկերների և գործատուների ասոցիացիաների և արհմիությունների հետ խորհրդակցություններ/քննարկումներ,
- տեխնիկական երկխոսություն քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ,
- պարբերական խորհրդակցություններ/քննարկումներ ղեկավար-բանակցողների և հավակնորդ-երկրների բանակցող թիմերի հետ,
- ընդլայնված երկխոսություն անդամ-պետությունների հետ բանակցային գործընթացի շուրջ:

Ռումինիան բանակցությունների մի մոտեցում է մշակել, որը բաղկացած է Եվրահանձնաժողովի հետ տեխնիկական խորհրդակցություններ/քննարկումներից (նախքան համապատասխան փուլը Ռումինիայի դիրքորոշումը/հայեցակետը ներկայացնելը), նպատակ ունենալով բարելավել բանակցությունների գործընթացի մշակման բարելավումը), ղեկավար-բանակցողների և հավակնորդ-երկրների բանակցող թիմերի միջև տեսակետների փոխանակումից, ինչպես նաև երկրի ներսում տեղի ունենալիք խորհրդակցություններ/քննարկումներից (այդ թվում՝ Սոցիալական և

տնտեսական կոմիտեի շրջանակներում արհմիությունների, գործատուների ասոցիացիաների, քաղաքական կուսակցությունների, որոշ ներկայացուցիչ-կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ):

ԵՄ-ին Ռումինիայի անդամակցելու բանակցային ռազմավարությունը հիմնված է հատկապես տարբերակման հիմնարար սկզբունքի վրա, ըստ որի յուրաքանչյուր հավակնորդ պետություն գնահատվում է իր սեփական արժանիքներով, կախված Կոպենհագենի և Մադրիդի ինտեգրման չափորոշիչի համաձայն որոշված առաջընթացից:

Բանակցային գործընթացի շրջանակներում այս սկզբունքը բաղկացած է տարբեր փուլերի բանակցությունների մեկնարկման համար պահանջվող երկու էական պայմանից. ԵՄ-ի օրենսդրության ընդունման և իրագործման որոշակի մակարդակի ապահովում և այդ իրավիճակին համապատասխան հայեցակետային փաստաթղթերի մշակում, ինչպես նաև ԵՄ-ին անդամակցելու պահանջների կատարման գծով հիմնավոր և իրատեսական ծրագրերի ներկայացում:

Սովորաբար բանակցային փուլի պայմանական ավարտը պահանջում է, որպեսզի ԵՄ-ը օրենսդրությունը զգալիորեն ընդունվի և գործողության մեջ դրվի համապատասխան ճյուղում/հատվածում, ինչպես նաև խախտումների, անցումային շրջանի և որոշ տեխնիկական նախապատրաստությունների գծով բանակցությունները ավարտին հասցվեն:

Բանակցային գործընթացի սկիզբը՝ 2000թ. փետրվարի 15: 2000թ. առաջին կեսին Ռումինիայի գործընթացը 5 փուլ/գլուխ է անցել՝ գլուխ 16՝ փոքր և միջին չափի ձեռնարկություններ, գլուխ 17՝ գիտություն և հետազոտություններ, գլուխ 18՝ կրթություն, ուսուցում և երիտասարդություն, գլուխ 26՝ արտաքին հարաբերություններ, գլուխ 27՝ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն:

Անդամակցության միջկառավարական երկրորդ գիտաժողովում (2000թ. հունիսի 14) Ռումինիան ապացուցեց, որ նա պատրաստ է սկսելու բանակցությունները ևս 8 բաժինների գծով: Սակայն Եվրախորհուրդը Եվրահանձնաժողովի առաջարկով որոշեց միայն չորս բաժինների գծով բանակցություններ սկսել Ռումինիայի հետ. գլուխ 6՝ մրցակցային քաղաքականություն, 12՝ վիճակագրություն, 19՝ հեռահաղորդակցություն և ԻՏ, 20՝ մշակույթ և աուդիովիզիոն: Չորս բաժիններից միայն 12՝ վիճակագրությունն է պայմանականորեն ավարտվել, ինչ վերաբերում է մյուս երեքին, լրացուցիչ տեղեկություններ են պահանջվել Ռումինիայի իշխանությունների կողմից:

Այսպես, 2000թ. Ռումինիան սկսել է բանակցությունները 9 բաժինների գծով և պայմանականորեն ավարտել 6 բաժինների գծով բանակցությունները:

Ռումինիայի նոր՝ ԵՄ-ին անդամակցելու բանակցային ռազմավարությունը հատկապես հիմնված է բանակցային գործընթացի գլոբալ մոտեցման վրա: Այնուհետև շեշտը տեղափոխվեց այսպես կոչված «ոչ այդքան դժվար» բաժինների (արտաքին հարաբերություններ, վիճակագրություն, կրթություն, ուսուցում և երիտասարդություն, ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն), ինչպես նաև սոցիալական և տնտեսական մեծ ազդեցություն ունեցող բաժինների վրա:

Ռումինիան բանակցային նախապատրաստություններում շեշտը դրեց այն զգալի նշանակություն ունեցող բաժինների վրա, որոնք վերաբերում էին ազատության 4 հիմնարար հասկացություններին՝ ապրանքների, ծառայությունների և կապիտալի ազատ տեղափոխություն: Ազգային պատվիրակությունը մշակեց հայեցակետային փաստաթղթերը, որոնք վերաբերում էին մեկ ընդհանուր շուկային, տնտեսության հիմնական ճյուղերին, ինչպես նաև շուկայական տնտեսությանը նպաստելու համար սոցիալական և տնտեսական համախմբվածությանը: Չափազանց դժվար գուխներ էլ էին շոշափվել, ինչպիսիք են՝ բնապահպանությունը, գյուղատնտեսական տարածաշրջանային քաղաքականությունները, ֆինանսական վերահսկողությունը և ֆինանսական ու բյուջետային հատկացումները:

Այն բաժինները, որոնց վերաբերյալ աշխատանքներ են սկսվել, կարևորում են շուկային նախապատրաստման գործընթացը, համաձայն Եվրոպական չափորոշիչների,

գործարար միջավայր ստեղծելու և դա միջազգային գործարար միջավայրին և ներքին շուկային կապելու միջոցով: Նաև հարկ է շեշտել այն փաստը, որ Ռումինիան մոնիտորինգ է անցկացնում այն բաժինների աստիճանական ներառման գծով, որոնք մեծ ֆինանսական ազդեցություն ունեն:

2001թ. բանակցային ռազմավարության տարրերը ներառում էին այս գործընթացի մեծապես քանակական մոտեցումը, որը կարևորում էր ԵՄ-ի օրենսդրության՝ որպես մի ամբողջության, վերլուծությունը, ինչպես նաև երկրի ներսում ազգային պատվիրակության շրջանակներում հաստատությունների միջև բանակցությունների զարգացման մոտեցումը, ինչպես նաև սոցիալական գործընկերների, քաղաքական կուսակցությունների և պառլամենտի հանձնաժողովների հետ խորհրդակցություններ/քննարկումները: Ռումինիան նաև լրացրել է հայեցակետային և բանակցային փաստաթղթերի մշակման գործընթացները, այն է՝ Եվրահանձնաժողովի, անդամ-պետությունների և հավակնորդ-պետությունների հետ տեխնիկական խորհրդակցություններ/քննարկումների առումով:

Ռազմավարական և ինստիտուցիոնալ նոր մոտեցումը զգալի առաջընթաց ապահովեց բանակցային գործընթացում: Այսպես, 2001թ. Ռումինիան մշակել և պաշտոնապես ԵՄ-ին է ներկայացրել 31 հայեցակետային փաստաթուղթ:

Շվեդիայի և Բելգիայի նախագահության ժամանակ 8 բաժինների գծով բանակցություններ են սկսվել. գլուխ 4՝ կապիտալի ազատ տեղափոխություն, 5՝ ԲԸ օրենքը, 8՝ ձկնաբուծություն, 9՝ տրանսպորտ, 10՝ հարկում, 13՝ սոցիալական քաղաքականություն և զբաղվածություն, 23՝ սպառողներ և առողջապահություն, 25՝ մաքսային միություն, այն դեպքում, երբ 3 բաժինների գծով բանակցությունները պայմանականորեն ավարտվեցին. գլուխ 8՝ ձկնաբուծություն, 23՝ սպառողներ և առողջապահություն և 5՝ ԲԸ մասին օրենք: Այսպիսով, 2001թ վերջին Ռումինիան 17 բանակցային բաժինների գծով բանակցություններ սկսեց, որոնցից 9 պայմանականորեն ավարտվեցին:

ԵՄ-ին Ռումինիայի ինտեգրման նախապատրաստման գործընթացի համակարգման համար ինստիտուցիոնալ հիմքը, որը դրվել է 2001թ., Եվրահանձնաժողովի կողմից դիտվել է որպես Ռումինիայի անդամակցմանը զգալիորեն զպաստող մի գործոն:

Այս պայմաններում Ռումինիայի օրենսդրությունը ԵՄ-ի օրենսդրությանը հարմարեցնելուն ուղղված երկրի ջանքերում տեղ գտած առաջընթացը, հատկապես՝ բոլոր բանակցային բաժինների համար հայեցակետային փաստաթղթերի մշակման և ներկայացման առումով ապահովեց բանակցային գործընթացի սկիզբը և ստեղծեց այն հիմքերը, որոնք անհրաժեշտ են արագացնելու բանակցությունների նախնական սկիզբն ու ավարտը:

2002թ. բանակցային ռազմավարությունը կարևորում էր բանակցային գործընթացի տարբերակված մոտեցումը: Մյուս կողմից, ԵՄ-ի հետ բանակցություններում մեծապես քանակական մոտեցումը կարևորում էր անցումային շրջանի, տեխնիկական նախապատրաստությունների և Համայնքի քաղաքականություններում լուծա կատարելու համար խնդրանքները, նաև՝ ընդհանուր հայեցակետային փաստաթղթերում ԵՄ-ի կողմից պահանջվող լրացուցիչ տեղեկությունների և բացատրությունների տրամադրումը:

2002թ. հիմնական նպատակը տարվա վերջում բոլոր բանակցային բաժինների սկսելն էր, միաժամանակ խիստ հսկողություն իրականացնելով ստանձնված պարտավորությունների հանդեպ և ուժեղացնելով համագործակցությունն ու երկխոսությունը անդամ-պետությունների և հավակնորդ պետությունների հետ:

Նույն տարում ազգային պատվիրակությունը շարունակեց արագացնել բանակցությունների նախապատրաստման աշխատանքները:

2002թ. սկզբին մի շարք միջացառումներ իրականացվեցին, որոնց նպատակն էր արագացնել երկրի նախապատրաստական աշխատանքները, որոնք ուղղված էին բանակցային գործընթացում զգալի առաջընթացի ապահովմանը: Այսպես, Ռումինիայի

կառավարությունը ընդունեց «ԵՄ-ը անդամակցելու նպատակով Ռումինիայի նախապատրաստական աշխատանքների ինտենսիֆիկացման և արագացման միջացառումների ծրագիրը, 2002թ. հունվար-մայիս», որը գլխավորապես ուղղված էր այն միջացառումներին և գործողություններին, որոնք պետք է ձեռնարկվեին բանակցությունների նախապատրաստման համար: Այս համատեքստում յուրաքանչյուր գլխի համար որոշվել են մի շարք օրենսդրական և ինստիտուցիոնալ միջոցառումներ, որոնք նպատակ ունեն արագացնել անդամակցելու բանակցային գործընթացին և վերացնեն այս գործընթացում հանդիպող խոչընդոտները:

«ԵՄ-ին անդամակցելու նախապատրաստման համար առաջնահերթ գործողությունների պլանի» մեջ որոշվել են հիմնական առաջնահերթությունները և որոշակի միջոցառումները յուրաքանչյուր գլխի համար (2002 թ. սեպտեմբեր): Մեկ այլ փաստաթղթում, որը կոչվում է «Վարչարարական և իրավական կարողությունների հզորացման գործողությունների պլան», սահմանվել և վերահսկվել են այն անհրաժեշտ միջոցառումները, որոնք պահանջում էին ԵՄ-ի օրենսդրության ընդունման և իրագործման պատշաճ մակարդակի ապահովման համար, մինչև Ռումինիայի ԵՄ-ին անդամակցելը (ԵՄ-ի օրենսդրության համաձայն վարչարարական բարեփոխումների և ինստիտուցիոնալ հզորությունների ստեղծման տեսակետից):

Կառավարությունը մշակել է «Եվրոպական ինտեգրման առաջնահերթ միջոցառումների պլան, 2003թ. նոյեմբեր-դեկտեմբեր»: Այս փաստաթուղթը կազմված է միասնական և համահունչ ձևով, ճյուղային պլաններում ներառված նպատակներն ու միջացառումները ընդունվել են Եվրահանձնաժողովի հետ համագործակցության արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով բանակցային փաստաթղթերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին տարվա փորձից ելնելով անհրաժեշտություն է ծագել վերանայել և ձևափոխել Եվրոպական ինտեգրման նախարարությունը, կառավարությունը 2002թ. հոկտ. 25-ին համապատասխան որոշում է ընդունել Եվրոպական ինտեգրման նախարարության վերաբերյալ:

Արտաքին գործերի նախարարության առաջարկով Եվրոպական ինտեգրման նախարարությունը ԵՄ-ի անդամ-պետություններում հիմնական դեսպանատների փորձագետների և դիվանագետների թիմերի աշխատանքները համակարգելու նպատակով կարող է ԵՄ-ի նախագահ հանդիսացող երկրների Ռումինիայի դեսպանատներում նշանակել իր ներկայացուցչին, որի նպատակն է կանոնավոր կերպով տեղեկացնել ԵՄ-ի նախագահի դիրքորոշման մասին: Բացի այդ, Եվրոպական ինտեգրման նախարարությունը Արտաքին գործերի նախարարության առաջարկով իր մասնագետների թվից նշանակում է խորհրդատուների և/կամ փորձագետների, ովքեր պետք է աշխատեն ԵՄ-ում Ռումինիայի մշտական առաքելության/միսիայի շրջանակներում և մշտապես տեղեկացնեն Արտաքին գործերի նախարարությանն ու Եվրոպական ինտեգրման նախարարությանը ԵՄ-ի համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի զարգացման վերաբերյալ:

Հիմնական արդյունքները՝ թիմերի տեխնիկական կառուցվածքի ամրապնդումը, զգալի նշանակություն ունեին բանակցային գործընթացում, մյուս արդյունքները՝ մոտ ապագայում ԵՄ-ի ընդլայնման շրջանակներում քաղաքական և դիվանագիտական առումով նվաճումները:

Արտասահմանի հետ կապված այդ նոր կառուցը էլ ավելի ամրապնդվեց անդամակցման գործընթացի շրջանակներում ներքին կառույցների հզորացմամբ. նախարարությունները, կենտրոնական հաստատությունները, իշխանության մարմինները իրենց ստորաբաժանումները ամրապնդեցին ԵՄ-ին անդամակցելու համար, որոշակի գործառնություններ սահմանելով և հանրային հատվածի ֆունկցիոներների կամ ներգրավված մասնագետների համար ապահովելով մասնագիտական ուսուցման դասընթացներ:

Որպես դրանց հետևանք, միջկառավարական գիտաժողովներում քննարկման համար 13 բանակցային բաժիններ են բացվել: Դրանք են՝ 1 - ապրանքների ազատ տեղափոխություն, 2 - անձանց ազատ տեղափոխություն, 3 - ծառայությունների ազատ

տեղափոխություն, 7 - գյուղատնտեսություն, 11 - տնտեսական և դրամային միություն, 14 - էներգետիկա, 15 - արդյունաբերության զարգացման քաղաքականություն, 21 - տարածաշրջանային զարգացման քաղաքականություն, 22 - բնապահպանություն, 24 - արդարադատություն և ներքին գործեր, 28 - ֆինանսական վերահսկողություն, 29 - ֆինանսական և բյուջետային հատկացումներ և 30 - հաստատություններ: Իսկ 7 բաժիններ (11 - տնտեսական և դրամային միություն, 13 - սոցիալական քաղաքականություն, 15 - արդյունաբերության զարգացման քաղաքականություն, 19 - հեռահաղորդակցություն և ԻՏ, 20 - մշակույթ և աուդիո-վիդեո քաղաքականություն, 25 - մաքսային միություն և 30 - հաստատություններ) պայմանականորեն փակվել են:

2002թ. վերջին բոլոր 30 բանակցային բաժինները բացվել են, իսկ դրանցից 16-ը՝ փակվել: Երկրի ներսում նախապատրաստական աշխատանքների արագացմանն ուղղված ջանքերը ներդրվեցին բաց բաժինները պայմանականորեն փակելու համար: Մինչև ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում բանակցային գործընթացում ստանձնված պարտավորությունների կատարմանը:

Այս համատեքստում 2002թ. դեկտեմբերի ԵԽ-ի նիստը կարևոր նշանակություն ուներ Ռումինիայի համար, հատկապես այն առումով, որ անդամակցելու հետ կապված ակնկալիքները ավելի որոշակի էին դառնում: ԵՄ-ին Ռումինիայի անդամակցելու հստակ ամսաթվի որոշումը, ճանապարհների նոր քարտեզի հաստատումը լրացուցիչ ֆինանսական աջակցության հետ միասին այն տարրերն էին, որոնք զգալի առաջընթաց պետք է ապահովեին անդամակցման համար բանակցությունների դինամիկայում: Այդ ժամանակահատվածում Ռումինիայի 2007թ. ԵՄ-ին անդամակցելու ընդհանուր նպատակը հաստատվեց և առաջարկվեց պահպանել բոլոր բաց բաժինների գծով քննարկումների ռիթմը, ներառյալ ֆինանսական ասպեկտները որպես ինտեգրման ընթացիկ գործընթացի անբաժանելի մաս:

2003թ-ից բանակցությունների գործընթացի նոր փուլ սկսվեց դժվար և չափազանց դժվար բաժինների գծով, դրանք ավելի բարդ ձևով կապելով ԵՄ-ի օրենսդրության հետ, որի նպատակն էր Ռումինիայի տնտեսական քաղաքականությունը հարմարեցնել ԵՄ-ի քաղաքականությանը: Այս փուլի ռազմավարական նպատակը բանակցային բաժինների պայմանական փակումն էր, հատկապես՝ այն բաժինների գծով, որոնք վերաբերում էին ներքին շուկային, ինչպես նաև ստանձնված պարտավորությունների կատարման մոնիտորինգին, նաև անդամ-պետությունների և հավակնորդ պետությունների միջև համագործակցությանը և երկխոսությանը:

2003թ. առաջին կեսին շուկայի գործունեության համար ևս երեք չափազանց կարևոր բաժիններ են փակվել՝ 4 - կապիտալի ազատ տեղաշարժ, 1 - ապրանքների ազատ տեղաշարժ և 4 - հարկում:

2003թ. երկրորդ կեսին միջկառավարական գիտաժողովների շրջանակներում հետևյալ բաժիններն են փակվել. 2 - անձանց ազատ տեղափոխություն, 9 - տրանսպորտի քաղաքականություն և 28 - ֆինանսական վերահսկողություն: Բանակցությունների միջանկյալ ռաունդ է տեղի ունեցել բաժին 3 -ի գծով (ծառայությունների ազատ տեղաշարժ): Այս ժամանակահատվածում Ռումինիայի նպատակն էր առաջընթաց ապահովել հետևյալ բաժինների գծով՝ 3 - ծառայությունների ազատ տեղաշարժ, 6 - մրցակցություն, 7 - գյուղատնտեսություն, 14 - էներգետիկա, 21 - տարածաշրջանային զարգացում, 22 - բնապահպանություն, 24 - արդարադատություն և ներքին գործեր և 29 - ֆինանսական և բյուջետային հատկացումներ:

2003թ. վերջին բոլոր 30 բաժինների գծով բանակցություններ են սկսվել և 22-ի գծով պայմանականորեն ավարտվել են: Կառավարության կողմից սահմանված ռազմավարական նպատակների իրագործումը զգալի առաջընթաց է ապահովել, որը հաստատվել է 2003թ. դեկտ. Բրյուսելում ԵԽ-ի նիստում, որտեղ ԵՄ-ի ընդհանուր նպատակը կրկին հաստատվեց, և որում 25 անդամները վերահաստատեցին, որ 2007թ. հունվարի 1-ը Ռումինիայի անդամակցելու ամսաթիվն է:

2004թ, էական նշանակություն ունի բանակցությունները ավարտին հասցնելու և ԵՄ-ի օրենսդրության բոլոր բաժինները ընդունելու համար: Դրա արդյունքում կառավարությունը մշակեց «Անդամակցելու համար առաջնահերթ միջոցառումների պլան. 2003թ. դեկտ - 2004թ. դեկտեմբեր»:

Բանակցությունների ընթացքում ստանձնված պարտավորությունները նույնպես հաշվի են առնվել: Ինտեգրմանը նախապատրաստման նպատակով բոլոր անհրաժեշտ միջոցառումների ամփոփ նկարագիրը ունենալու համար հաշվի են առնվել գործունեության բոլոր ճյուղերը բնութագրող ծրագրային փաստաթղթերը, ճյուղերի զարգացման ծրագրերը կամ ռազմավարությունները:

Այդ պլանի առաջնահերթությունները և միջոցառումները կարևորում են հետևյալ ասպեկտները.

- համապատասխանությունը քաղաքական չափանիշին,
- համապատասխանությունը տնտեսական չափանիշին,
- ԵՄ-ի անդամ հանդիսանալու գծով պարտականությունների կատարման կարողությունը, որը շեշտվում է բանակցությունների 29 բաժիններում:

Բանակցային գործընթացում ստանձնված պարտավորությունների հաջող կատարման, օրենսդրական և ինստիտուցիոնալ տեսակետից ԵՄ-ի օրենսդրության իրականացման համար Պլանի կառուցվածքը նախատեսում է անմիջական մոնիտորինգ կատարել անդամակցմանը նախապատրաստման համար առաջնահերթ նպատակների իրագործման գծով: Պլանը նախատեսում է յուրաքանչյուր միջոցառման համար որոշակի հաստատության պատասխանատվությունը, դրա կատարման ժամկետը, ինչպես նաև ֆինանսական աղբյուրը (պետական բյուջե, արտաբյուջետային ֆինանսավորում, անհատույց օժանդակություն, արտաքին վարկեր և այլն):

Նկատի ունենալով այս մանրամասն Պլանը, ինչպես նաև ԵԽ-ի 2003թ. տարեկան հաշվետվությունը, Ռումինիայի կառավարությունը ինը խոշոր առաջնահերթություններ է սահմանել 2004թ. ԵՄ-ին միանալու համար նախապատրաստական աշխատանքների գծով: Դրանք են՝

- պետական/հանրային կառավարման գծով բարեփոխումներ արագացում,
- արդարադատության ոլորտի բարեփոխումներ,
- կոռուպցիայի դեմ պայքար,
- էներգետիկ ոլորտում կառուցվածքային բարեփոխումներ,
- half-wits-ի/ չհամապատասխանող մասնագետների կրճատում և տնտեսության մեջ ֆինանսական կարգապահության ամրապնդում,
- գործարար միջավայրի բարելավում,
- գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտներում ԵՄ-ի օրենսդրության կատարման վարչարարական կարողությունների ամրապնդում,
- սահմանների անվտանգության ամրապնդում,
- ԵՄ-ին անդամակցելուն նախապատրաստման համար ֆինանսական միջոցների կառավարման վարչարարական կարողությունների ամրապնդում:

ԵՄ-ը ամբողջովին աջակցում է Ռումինիային Միության անդամակցելու նրա ջանքերում և ամեն ինչ կախված է մեզանից բանակցային գործընթացում ստանձնված պարտավորությունները կատարելու համար: Մեզ «քաղաքական ոլորտում ապահովագրական պոլիս» են տվել, որը մենք պետք է բարձր գնահատենք և մեծ կարևորություն տանք ընթացիկ սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններին և Եվրոպական մեր պոտենցիալին: